

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒ «ՏԱՂ ՔԱԶԻ ԼԻՊԱՐՏԻՆ» ՊԱՏՄԱԿԱՆ ՈՂԲԸ

Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Միջնադարյան հայ գրականության մեջ սլատմական թեմայով ողբեր, որ-
պես գրական ժանր, անմիջականորեն արձագանքել է հայության համար աղե-
տաբեր քաղաքական դեպքերին և իրադարձություններին, եղբերեղել անձնա-
գոհությունն այն հերոսների, որոնք ազատագրական պայքարում դարձել են
թշնամական կամ համազգի բռնությունների զոհ: Վերջիններից է նաև սպա-
րապետ Լիպարիտը: Նրա լեզենդար կերպարն իր արժանի դրսևորումն է
ստացել մեր միջնադարյան գեղարվեստական գրականության էջերում: հայտ-
նի են ոմն Սարգսի «Հողովող սուրբ ես և ամբիծ» սկսվածքով քնարական բա-
նաստեղծությունը, «Պատմութիւն քաջ Լիպարիտին» գրույցը և, մանավանդ,
նշանավոր տաղերգու Հովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարտին»
ներշնչանքով հյուսված գործը, արժանի ուշադրության թե՛ իր բովանդակու-
թյան պատմական արժանահավատությամբ և թե՛ իրրև հայ ողբագրության
գողտրիկ նմուշ:

1360-ական թթ. շեմքին Կիլիկիայի հայկական պետությունն ամփոփված
էր մի փոքր տարածության վրա: Հարավից նրա վրա էին հարձակվում եգիպ-
տական մամլուքները, հյուսիսից՝ թուրք չրոսակները: Արաբ, ղահրաման ու
սելջուկ ասպատակները ամայացնում էին հայկական բնակավայրերը, թալա-
նում ու կոտորում ժողովրդին: Պարբերաբար կրկնվող հարձակումների հե-
տևանքով երկրում սերմը անթաղ էր մնում, արտը՝ անքաղ, և հողի սերմա-
նողը դատապարտվում էր սովամահության: 1370 թ. համար մի տեղ վկայ-
վում է հետևյալը. «...և ի նոյն ամին հղև սղութիւն յերկրին Կիլիկեցոց՝ վասն
այսքան պատերազմաց, որ ոչ կարացին հողագործքն սերմանել և հնձել զե-
րիս ամս. և եղև մի մոթ ցորեան, որ ունի զծանրութիւն իբրև յիսնոց լտրոց,
զոր հունտքերի կոշեն,—500 ղուրուշի»¹:

Ահա այդ ողբերգական ժամանակաշրջանի հերոսն է Լիպարիտը: Նրա
անվանն ամենավաղ հանդիպում ենք մի հիշատակարանում, գրված 1361 թ.
Թորոս Ռուբինյաց քահանայի ձեռքով, որը, ինչպես հայտնի է դառնում հիշա-
տակարանից, նույն թվականին Սիս քաղաքում տվարտել էր «Մեծին Ներսեսի
վարուց պատմութիւն» երկի ընդօրինակումը՝ «...ի խնդրոյ սրբասէր, հեզ,
քաղցր և խոնարհ իշխանացն՝ պարոն Լիպարտի և պարոն Վասլի, որդւոցն
պարոն Թորոսի Կապնցոյն՝ սպարապետին Հայոց, ի վայելումն անձանց իւ-
րոց...»²: Նկատի առնելով աղետավոր ժամանակը (1360 թ. Մսրա գորքը զավ-
թել էր Դաշտային Կիլիկիան՝ Ադանա և Տարսոն նշանավոր քաղաքներով, իսկ

¹ Ա լ ի շ ա ն, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 542:

² Լ. Խ ա չ ի կ յ ա ն, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950,
էջ 451:

Կիւպրոսի ֆրանկ թագավորութիւնը, հայերին օգնելու պատրվակով, յուրացրել էր Կոռիկոս ծովափնյա բերդաքաղաքը)՝ զրիշը պատվիրատու եղբայրներին ցանկանում է զգկեանս խաղաղական»։ Հիշատակարանում Լիւարիտի համար գինժորական որեւէ աստիճան չի ակնարկւում. իբրեւ ազնւական դասի ներկայացուցիչ նա անվանւում է իշխան և պարոն։ Այդ հանդամանքը որոշ հիմք է տալիս ենթադրելու, որ մարաջախտի (սպարապետի) բարձր աստիճանին արժանանալու համար 1361 թ. նա, թերեւ, տակավին երիտասարդ էր։ Մյուս կողմից հայտնի չէ, թե հիշատակարանը գրվելու ժամանակ ապրում էր նրա հայրը, որին նա կարող էր հաջորդել սպարապետի կոչումով։

Լիւարիտի գորավարական գործունեութիւնն ամենայն հավանականութեամբ ծավալվել է Կոստանդին V-ի (1365—1373) թագավորութեան սկզբի տարիներին, 1367—1369 ժամանակահատվածում, երբ Սսի վրա անընդհատ արշավանքներ էր ձեռնարկում Տարսուսի եգիպտական ամիրա (կուսակալ) Շահար-օղլի Մանչակը՝ նպատակ ունենալով մեկընդմիշտ վերջ տալ հայկական պետականութեանը։ Դրանք նկատի ունենալով թլկուրանցին, երբ գրում էր.

Պատերազմին չըկալու խափան, ամէն տարի՝ տասն ու քսան...

Կիլիկիայի ժամանակագիրը³ հաղորդում է մասնավորապես 1367 և 1369 թթ. ռազմական ընդհարումների մասին։ Լ'ստ նրա, Մանչակը, հավաքելով թի Շամբուն հիծելէն քանի որ կարաց, և ղուրակիր թուրքմանն զամէնն, և այլ բազում խարամնցիք»՝ մոտ 12 հազարանոց բանակով 1367 թ. մայիսին շարժւում է դեպի Սիս, «Անցմնցկին դիհն»։ Անցմնցուկը, մայրաքաղաքից հարավ-արեւելք ընկած մի զետակ, իր կամրջի շնորհիվ ռազմական կարևոր նշանակութիւն ուներ։ Այն գրավելով՝ թշնամին կարող էր անկաշկանդ ներխուժել քաղաք։ Ահա թե ինչու Սսի բնակչութիւնը, հեծյալ ու հետեակ, միարան կասեցնում է Մանչակի առաջխաղացումը։ Կուսակալը դիմում է խորամանկութեան. հաջորդ օրը պատգամավորութիւն է ուղարկում Կոստանդին V-ի մոտ «ուզելով հրաման տալոյ, եթէ զամ առաջի քաղաքին ի ֆոռու՝ վասն տեսանելոյ զքաղաքն»։ Նա ծրագրում է հանկարծակիի բերել հայկական զորամասերը և նենգորեն տիրանալ քաղաքին։ Հայտնի են դառնում նրա նկրտումները։ Թուրք մարտունակ հայերը, անգամ հիվանդները, ելնում են կովի։ Եգիպտական զորավարը, մարտադաշտում թողնելով մեծաթիվ զոհեր, պարտ-

3 Անհայտ հեղինակ, որի ժամանակագրութիւնը գիտական հասարակայնութեանը հայտնի է «Սիսուանից», Ալիշանի քաղվածքաբար օգտագործումով միայն (հատվածները տե՛ս «Սիսուանի», մանավանդ, հավելվածում, 531—544 էջերում)։ Ամբողջական բնագիրն անտիպ լինելու պատճառով՝ հնարավոր չէ որոշել այդ երկի գրութեան ժամանակը։ Հրատարակված հատվածներում հատուկնտ վկայութիւններ կան նաև XV—XVII դարերի վերաբերյալ («Սիսուան», էջ 538 և այլն), բայց թլկուրանցու ողբի ժամանակին առնչվող զեպքերի կատարման տեղանքը և այլ պարագաներ, անգամ մանրամասների առումով, այնպիսի ճշմարտացիութեամբ են ներկայացված, որ կասկած չի հարուցում, թե այն ժամանակակցի գործ է՝ հետագայում, XVII դարում, խմբագրված և լրացված նոր հեղինակի կողմից։ Նույն ժամանակագրութեան, գուցե և անաղարտ, բնագրից մի հատված է Երևանի Մատենադարանի № 1205 ձեռագրում եղած պատուիկը (թուղթ 197), որն իրավամբ տեղ է գտել պատմաբան Լ. Խաչիկյանի «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում» էջ 477, հմմտ. «Սիսուանի» 541—542 էջերի համապատասխան հատվածների հետ)։

4 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 477։

5 Նույն տեղում, էջ 477 (հմմտ. «Սիսուան», էջ 542)։

վում է ու նահանջում: Այդ ճակատամարտի հետ կապված է Լիպարիտն առաջին անգամ հիշվում իբրև ավագ մարաջախտ⁶: Նա երևան է բերել ռազմավարական ձիրք և խիզախություն: Նրանից խոցվածների թվում էր և Մանչակի տղան: Թլկուրանցին իր ողբում հայերի հաղթությունը պայմանավորում է ղիխավորապես Լիպարիտի խիզախությամբ:

Մի՛նն րզրումներն հալածէր, արիւն հանէր զերբ զետ Զինան:

Երկու տարի անց կատարված արշավանքի ժամանակ որդեկորույս Մանչակի բանակը նախկինից շատ ավելի մեծաթիվ է եղել (շուրջ 60 հազար): Անհավասար կռիվում զոհվել է Լիպարիտը: Այս դեպքն էլ կազմում է Թլկուրանցու ողբի առանցքը: Բրիտանական թանգարանի XIV դարի հայերեն մի զրրչադրում պահպանվել է անցքի համառոտ, բայց հավաստի նկարագրությունը, որը բերում ենք ամբողջությամբ, մանավանդ որ այն Թլկուրանցու երկի արժանահավատությունը հաստատող պատմական մի վավերագիր է:

«Ի թվին ՊժԼ (1369)-ն ի մայիս] ամսուս Ի (20)-ն երեկ Տարսոյ նայիպն Շուհորէ որդին ի վրայ Սրսուս Ի շաբաթ օր կռուեցան Յուսին զիհն ու իրք մի վզեն շկարցին այնել: Ու կերակի ի վաղունէ եկին յԱնցմնցկին կանդարայն հեծմնով ու հետևելով, զրին կռիւ ու խանկրեցին զքրիստոնէքն ու սպանին Ճ (100) մարդ: Ու սպանին զպարոն Լիպարիտ՝ պարոն Թորոս ավա՛հ մարաջախտուն որդին, ու այրեցին զքաղաքն ու զղարպասն: Ու կեցաւ Գ (3) ար ու դարձաւ ի յիր տեղն ի Տարսուս: Կու ասեն, թէ Կոստրնդին թաղաւոր՝ պարոն Հեթմու որդին, երեք զհիծելն ու տուր տուեց զպարոն Լիպարիտն ու զքաղաքն տաճկին»⁷:

Այս արժեքավոր ֆրագմենտի հեղինակը, միաժամանակ և ամբողջ ձեռագրի զրիչը, Լիպարիտի եղբայր Վասիլն է⁸: Մեջ բերված տողերը բնորոշ են եղիպտական զավթման ենթակա հայկական պետության մայրամուտի համար: Թաղավորական իշխանությունը, այլևս ջլատված ներքին ու արտաքին հակասություններից, իր իսկ ձեռքով ոչնչացնում էր երկրի հայրենասիրական ուժերը՝ իրապես արագացնելով սեփական կործանումը: Մարտական այնքան հաճախ կրկնվող բնդհարումների այդ ժամանակաշրջանում ռազմավարական տաղանդով օժտված Լիպարիտը բնակչության մեջ բնականաբար նվաճած կլիներ սեր ու համակրանք՝ համարվելով երկրի պաշտպանն ու հույսը: Ի հաստատումն այս մտքի, բացի Թլկուրանցու ողբից, կարող ենք վկայակոչել վերոհիշյալ Սարգսի եղերերգի հետևյալ տողերը, որոնց բանաստեղծական ծածկույթի տակ, անշուշտ, պատմական ճշմարտությունն է երևան գալիս.

ՍԸՍԱՅ ԵՐԿՐԻՍ ԱՍՏՂ ԼՈՒՍԱՏՈՒ,
Կանգնող էիր յամլէ ժամու,
Թուրքն ի յահէզ սարս, բ մահու ..

ԴՈՒՆ, ՍԻՆ, ԷԻՐ ՀԱՅՈՑ՝ ՄԵԶԻԿ,
Ո՛վ մեծ հրգօր քաջ Լիպարիտ⁹:

⁶ Նույն տեղում, Վ. 477:

⁷ «Պատմա-քանասիրական հանդես», 1963, N 4, էջ 197:

⁸ Տե՛ս Ա. Մ ա թ ե ո ս յ ա ն, Հեթում Ախուրց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, Նույն տեղում, Վջ 184:

⁹ Տե՛ս Ա լ ի շ ա ն, Յուշիկը հայրենեաց հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1870, էջ 511:

Ահա թե ինչու Կոստանդին V-ը, իր թագն ու պատիվը վտանգված գրտնելով, ատել է Լիպարիտին, հանձին նրա տեսել զահի իր մրցորդին: Զորավարից թագավորի ունեցած վախի իրական հուշն արձագանքվել է նաև «Պատմութիւն քաջ Լիպարիտին» գրույցում, որտեղ ասված է. «Եւ թագաւորն երկեաւ: Ի քաջ Լիպարիտէն, զի մի զուցցէ և զինքն ըսպանանէ և թագաւորէ»¹⁰:

Բայց անհրաժեշտ է հնարավորին չափ պարզել և մի այլ խնդիր. ի՞նչ ընտանիքից էր սերում Լիպարիտը, դահի հանդեպ նրա հավակնությունը (եթե այդ ճիշտ է) պայմանավորված էր արդյոք նրա ծագմամբ: Հիշենք, որ Լևոն IV-ի մահով (1342) անճետված Հեթումյան դինաստիան այլևս զահի թեկնածուներ չտվեց: Կիլիկյան հայկական պետության հաջորդ 33 տարիներ (1342—1375) թագակիրները թեև իրենց Հեթումյանների շառավիղ էին համարում, բայց նրանց «զահակալական իրավունքը», ըստ ավատական պահանջի, «օրինականացվում էր» նրանով, որ կիլիկացի Լուսինյաններ «վիդոնի» (1343—1344) մայրն ու Լևոն V-ի (1374—1375) տատը՝ Զարեյր, Լևոն IV-ի հորաքույրն էր, Կոստանդին IV-ի (1344—1363) կինը՝ Մարիամը, նույն Լևոնի քույրը (հարազատ միայն մոր կողմից), իսկ Կոստանդին V-ը (1365—1373)՝ համանուն նախորդի հորեղբորորդին (ըստ Ալիշանի՝ եղբորորդին): Վերջինիս տարիներին Սսում նրա նկատմամբ դժգոհության մի թանձր ալիք էր առաջացել: Հավանաբար անբավական մարդկանց թվում էր նաև Լիպարիտը, որը զոհ է գնացել նրա մեքենայություններին: Այդ բանում նախ՝ կասկածել, ապա և համոզվել է Վասիլը: Ահա թե ինչու նա ևս մասնակցել է Կոստանդինի դեմ հետագայում, 1373 թ. կազմակերպված դավադրությանը, որի մասին կա Դարգելի ուղղակի վկայություն¹¹: Վերջինս իր գրքում առհասարակ առիթը բաց չի թողել Արևմուտքին հակված Լևոն Լուսինյանի հանդեպ նվաստացնելու և սեպեցնելու ժամանակի հայ կաթողիկոսին, Վասիլին ու սրանց համախոհ մարդկանց՝ մեղադրելով տիրանենգության ու դավաճանության, անգամ գանձագողության մեջ: Վասիլի վերաբերյալ նրա հաղորդումները որքան էլ բացասական լինեն, այնուամենայնիվ հաստատումն են այն բանի, որ ինչպես մի ժամանակ Լիպարիտը՝ նա ևս հայ պետության կյանքում կշիռ ու հեղինակություն է ունեցել: Արդեն հիշված ժողովրդական գրույցում թեպետ Լիպարիտի համար ասված է, որ նա զահ բարձրանալու ցանկություն չի ունեցել («Այլ քաջն հոգով և մարմնով Լիպարիտ ոչ ունէր այնպէս վատ խորհուրդ»¹²), բայց կարելի է ենթադրել և հակառակը. արդյոք նա չի՞ փայլափայլ արքայական ծիրանի կրելու երազանքը: Իրան որոշ հիմքեր է տալիս Թրիտանական թանգարանի նույն N 5458 ձեռագիրը: Նրանում ընդօրինակված Սմբատ Գունդուսարի Տարեգրության անանուն շարունակողի բաժնում հայկական ՉԾ է (1308) և ԶԿ (1311) թվականների դիմաց լուսանցքում կատարված է հետևյալ լրացումը. «Ի սոյն ամի (այսինքն՝ 1308 թ.—Պ. Խ.)»¹³

10 Հ ո վ հ ա ն ն ե ս Թ լ կ ու ռ ա ն ց ի, Տաղեր, աշխատասիրությամբ՝ Էմ. Պիվազյանի Երևան, 1960, էջ 272:

11 «Զովհաննու Դարգելի ժամանակագրութիւն», Ս.—Պ., 1891, էջ 110—111:

12 Տ ն ու Հ ո վ հ ա ն ն ե ս Թ լ կ ու ռ ա ն ց ի, Տաղեր, էջ 272:

13 Լուսանցադրության սկզբում գործածած հատուկ նշանով գրիչը մատնացույց է արել այն կարգալրանագրի «Ի թվ. ՉԾ է (1308) օծեցին թագաւոր Հայոց զՉԻն Ի Տարսուս քաղաք» նախադասությունից անմիջապես հետո, որի վերջում ևս գրված է նույն պայմանական նշանը՝ Ուրեմն «Ի սոյն ամին» անառարկելիորեն հայկական ՉԾ է (1308) թվականն է:

զնաց Օշին թագաւոր ի Թաւրէժու դանն վասն երկրիս կարն[ա]ց, որ և ար-
[ար] խնամութիւն րնդ Գորդէն թագաւոր վրաց ու այրին պոմն թուիթ առջի
դանին՝ գԴաւիթ որդի վրաց թագաւորին ի հետ տամուժէլ Ալիծին՝ փոքր քօրն
Օշին թագաւորին, ու երբը գԴաւիթն ի հետն ու ի թվ[ի]ն ՉԿ (1311)-ն¹⁴ արար
հարսնիք ի Չ (6)-ն յունուարն ի Տարսուս ու երկու սիգղով զԿապանն իր երկ-
րովն ու հաստատեց զպարոն Դաւիթն զունթ Կապանուն երկրին ի թվ[ի]ն¹⁵ թագաւո-
րէն, տէր էվանէ արհիւսկոսկոսն Սիւնեաց և պարոն Շահնշահ աւագ մա-
րաջախտն վրաց, և այրին պոման, որ հայոց սահմանով կենայ, և ոչ մի բան
ֆռանգութեան շիւնի յիր ամէն կենդանութեանն»¹⁶:

Հնարավոր է կարծել, որ գրիչ Վասիլը, Տարեգրությունն արտագրելիս,
բերված հատվածն անզորւորեն բաց է թողել և ապա ստիպված ավելացրել
լուսանցքում, այսինքն՝ հավելումը բնագրային է և ոչ գրչինը: Բայց այդպես
չէ: Բանն այն է, որ Սմբատի երկի հրատարակություններում, որոնք Վասիլի
գրչագրից չեն կատարված, վիճելի լուսանցագրությունը բացակայում է: Պա-
կաս կարևոր չէ և մի ուրիշ հանգամանք. նույն ձեռագրի մի այլ էջի լուսանց-
քում, իբրև լրացում Ախտուց տեղ Հեթում Զամբուլայի անտիպ ժամանակա-
գրության, 1288 թ. տակ ներկայացված է տամուժել (օրիորդ) Ալիծի ծննդյան
տարին. «Մնալ զուտոր թագաւորին Ալիծն»¹⁷: Միևնույն անձնավորության մա-
սին այս երկրորդ հաղորդումը զալիս է ապացուցելու, որ երկու լուսանցագրու-
թյունն էլ հեղինակային բնագրերին չեն, այլ հատուկ միտումով հետազոտյա-
նութված են գրիչ Վասիլի կողմից, հակառակ դեպքում՝ ընդօրինակման ժամա-
նակ ինչու է հատկապես Ալիծին վերաբերող տեղեկությունները պիտի վրիպած
լինեին արտագրողի աչքից:

Ըստ առաջին, ընդարձակ լուսանցագրության XIV դարի սկզբում Կիրիկ-
յան Հայաստանը հարաբերություններ է ունեցել Վրաստանի հետ: Դավթի և
օրիորդ Ալիծի ամուսնությունը, որ գլուխ է բերվել Օլջեյթուի (1304—1316)
էլիսանության մայրաքաղաք Թավրիզում, և Կապանի վրա նորոնծա փնջայի
«զունթ» (կոմս, իշխան) կարգվելն անպայման արվել են քաղաքական որոշա-
կի միտումով, զուցե և մոնղոլ խանի պարտադրումով ու միջամտությամբ,
մանավանդ որ և՛ հայ Հեթումյանները, և՛, հատկապես, վրաց Բագրատունի-
ները կախման մեջ էին նրանից: Հիշատակվող «պարոն Շահնշահ աւագ մա-
րաջախտն վրաց» անկասկած Օլջեյթուի նպաստումով ամբողջ Վրաստանը
միավորած Գեորգի Պայծառի սպասալարն է, Շահնշահ II Զաքարյանը¹⁸, իսկ
«էվանէ արհիւսկոսկոսն» հայ եկեղեցու արևելյան թևի ականավոր ներկա-
յացուցիչ Հովհաննես Օրբելն է, Ստեփանոս Օրբելյան պատմիչի ազգականն
ու հաջորդը Սյունյաց մետրապոլիտության զահի վրա:

¹⁴ Ի դեպ, ձեռագրում գրված է ՊԿ (1411): Ստացվել է այնպես, թե հայկ. ՉԾէ (1308) թ.
նշանված Դավթի և Ալիծի հարսանիքը կատարվել է ավելի քան մեկ դար հետո, որ անհեթեթու-
թյուն է, մանավանդ որ 15-րդ դարի սկզբում հայ թագավոր չկար: Հիշվող Օշինը թագավորել
է 1308—1320 թթ.: Հետևաբար ճիշտ համարելով նշանվելու վերաբերյալ թվականը՝ նրանով
ուղղում ենք հարսանիքի տարին, որը պիտի լինի ոչ թե հայկ. ՊԿ, այլ ՉԿ (1311) թվականը:

¹⁵ Կազմելու հետևանքով ձեռագրում համարյա մի ամբողջ տող անընթեռնելի է դարձել:

¹⁶ British Museum, Catalogue Or.: 5458 (տե՛ս Մատենադարանում պահվող մեկրո-
ֆիլմը), թուղթ 100ա (դրսի և ներսի լուսանցքներ) և 99բ (ներսի լուսանցք):

¹⁷ Նույն տեղում, թուղթ 121բ (լուսանցքում):

¹⁸ Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության,
Կիև 1-ին, Ներսիս, 1957, էջ 216:

Բայց լուսանցադրությունը մեզ հետաքրքրում է մի այլ կողմով. իրենից տասնամյակներ առաջ վրաց և հայ արքունիքների խնամիանալու փաստը վասիլին ինչ նպատակով է զրառել. արդյոք դրանով նա չի՞ ցանկացել ժամանակակիցներին ծանոթացնել իրարիտի և իր ծագմանը։ Այս ենթադրությանն առիթ է տալիս նաև իրարիտի անվան շուրջը Կիլիկիայի պատմության մեծագույն գիտակ Ալիշանի արած այն դիտողությունը, թե իրարիտ «անունն անգամ անծանոթ և անսովոր է բոլոր Կյուլիկեցիների պատմության մեջ, և սովորագույն է վրահայոց ու մանավանդ Ռուսիայի տոհմին մեջ»¹⁹։ Հստ Աճառյանի այն վրացական անուն է²⁰։ Այդպիսով իրարիտ անվան մուտքը հայերի մոտ բնականաբար որոնվում է վրացական ազդեցության մեջ։ Ինչպես տեսանք, Կորգլև²¹ թագավորի որդին, փեսայանալով Լևոն II-ի դստերը, Օշինից արժանացել է կալվածքի ու կոչման, կարգվել «ղունթ Կասյուն»։ Գիտենք, որ կասյանցի է եղել նաև իրարիտի ու վասիլի հայր Թորոսը։ Հնարավոր է, որ վերջինս ծնված լինել վրաց արքայազնից ու Ալիծից և, իբրև մոր կողմից Հեթումյան դինաստիայից սերած, բարձրացվել սպարապետության աստիճանի (չէ՞ որ արքայական բնտանիքին արևնակցությամբ կալված անձնավորություններն էին մեծ մասամբ հաստատվում կարևոր պաշտոններում)։ Այդ ճանապարհով նրա որդին կարող էր կրել վրացիներին ու վիրահայերին բնորոշ իրարիտ անունը։ Իհարկե, այս վարկածն ուժ կստանա միայն այն դեպքում, երբ ձևագրական տվյալները պարզեն, որ Դավիթն ու Ալիծը Թորոսի ծնողներն են եղել։ Եթե այդպես է, ապա իր լուսանցադրություններով վասիլը շահարկել է հայկական զահի նկատմամբ իրարիտի և իր իրավունքները։

Պարզ է դառնում, որ Կոստանդին V-ը հանձին իրարիտի տեսել է իր թագի հավակնորդին։ Նա, որ, Դարդևի վկայությամբ, իր մեծաքանակ հարստությունը պահպանելու հետամուտ՝ մերթ միավել է ղեպի թշնամին՝ Լեգիպտացիները, մերթ էլ ղեպի Կիլիկիայի ֆրանսիական թագավորությունը, 1369 թ. մայիսյան մի օր հրավիրել է Մանչակ ամիրային և, ինչպես վասիլն է հաղորդում, նենգորեն «տուր» տվել (հանձնել) «զպարոն իրարիտն ու զքաղաքն տաճկին»։

19 Ալիշան, Յուշիկը հայրենկաց հայոց, հատ. Բ, էջ 509։

20 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Սրեան, 1944, էջ 430։ Ի դեպ, շափազանց ուշադրավ է իրարիտ անվան կապակցությամբ պատմաբան Ս. Սրեմյանի հետևյալ դիտողությունը. «Իրարիտ» և «Թատ», — գրում է նա, — Բաղրամյան իրարիտյան տոհմի սեփական անուններն են և մինչև XIII դարը ոչ մի վրացի կամ հայ իշխանական տոհմում չենք պատահում։ Միայն հետագայում, երբ այս տոհմը դադարել էր գոյություն ունենալուց, Վրաստանում, ապա Հայաստանում, պատահում ենք «Իրարիտ» անվանը, այն էլ սրանց հաջորդող Օրբելյան տոհմում...» (տե՛ս Ս. Սրեմյան, իրարիտ գորավարի հաջորդները և Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը, Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 8, էջ 70)։

21 Վրաստանի XIV դարի I կեսի պատմության մեջ հանդիպող Գորգլև (Գեորգի)-ներից որն է նա՞ ստույգ հնարավոր չէ որոշել. գուցե Գեորգի V, «Պայծառ» մականվանյալը, որը տակավին 1299 թ. իր եղբայր, մոնղոլներին անհնազանդ Դավիթ VIII-ի փոխարեն Ղազան խանից հռչակվել էր Արևելյան Վրաստանի թագավոր, բայց իր պարտականություններին անցավ Դավիթ որդի Գեորգի VI-ի մահից հետո միայն, 1314 թ.։ «Քարթլիս ցխովրերա» վրաց ժամանակագրության համաձայն, սակայն, 1299-ին նա շատ երիտասարդ է եղել (տե՛ս «Մոնղոլական շրջանի վրաց ժամանակագրություն», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Պ. Մուրադյանի, մեքենագիր, 1962, էջ 139. պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում), հետևապես 1308-ին, թերևս, ամուսնանալու տարիքում տղա չէր ունենալ։ Նրա զահը 1346 թ. ժառանգեց Դավիթ (IX) անունով որդին։

* * *

Հիպարտի ժամանակակիցն է եղել Թլկուրանցին, թե՛ նրա մղած կռիվների պատմությանն ականջալուր է դարձել հետազայում՝ զորավարի քաջագործություններին ականատեսներից՝ միևնույն է, լանաստեղծի «Տաղ քաջի Հիպարտին» պատմական հավաստիությամբ շնչող արժեքավոր մի ողբ է, կատարված դեպքին այնքան հարազատ, որ նրա հեղինակը, Շնորհալու պես, իր պատկերածի մասին կարող էր լսել՝ «զիրս եղևոց, մեր ժամանակս դի պելոց»։ Համենայն դեպս պատմական թեմայով ոգբերի ստեղծման հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք, ինչպես Դավթակ Քերթոզի ողբը, իրադարձությունների անմիջական, նույնիսկ համաժամանակյա արտացոլումն են։ Թլկուրանցուն բացառություն չի կազմում։ Իր գործը գրելու ժամանակ Հիպարտի անունն այնքան առօրեական է եղել, հիշատակն այնքան թարմ, որ նրա համար ժողովուրդը դեռ սգի մեջ է գտնվել, քահանաներն էլ, հին սովորության համաձայն, իբրև նորավախճանի «տէր ողորմի» են առել նրան։

Յորտեղ նրստին հաց 'ի ի սեղան ժողովք բազում և շատ իշխան,
Յիշեն ըզնա սուրբ քահանայքն, տէր ողորմի ասեն նրմա։

«Տաղ քաջի Հիպարտին» էպիկական ստեղծագործություն է, բայց նրա պատմողական հյուսվածքը երանգավորված է հեղինակի մեղմ քնարականությամբ, հայրենական կովի մի դրվագը ներկայացնող նրա սյուժեին ձուլված է կրքոտ հայրենասիրությունը, դրա համար էլ այն սառն ու անտարբեր պատում չէ, այլ մի սրտալի գրույց, հերոսական ողբերգ։ Բանաստեղծը կերտել է իրար բախվող երկու անհավասար ուժերի՝ լայնածավալ Եգիպտական սուլթանության և բզկտված ու անօգնական Կիլիկյան Հայաստանի ռազմական գործողության կենդանի պատկերը։ Ահա Մանչակի բանակը նախապատրաստվում է հարձակվելու Մսի վրա։

Վարսուն հազար մառդ միաբան զրեհն հագան 'ի ի ձին հեծան,
Ջեռուին առին ըզում ճօճան, բուր և ապար ու կանգնեցան։
Վարսուն հազար բուրբանց ելան, ձայն ձրկեցին ու կատկեցան,
Հարին ըզվող պատերազմին, զպուկն ու զնափրն ըզգա հաբկան։

Հակառակորդի թվական գերակշռության կրկնակի նշումով («վաթսուն հազար») Թլկուրանցին, կարծես, ավելի է ընդգծել թշնամական սպառնալիքի ահավորությունը, զինահանդերձման ու ռազմափողերի հնչման նկարագրով ավելի դրամատիկ դարձրել մարտական դիպվածի տեսարանը։

Թշնամին պաշարել է քաղաքը, բայց հապաղում, ավելի ճիշտ՝ չի համար ձակվում անմիջապես ներխուժել, որովհետև սահեցիների հետ էր Հիպարտը։ Ամեն անգամվա պես՝ տաղնապի մեջ ընկած բնակչությունը հույսով ապավինում է իր սպարապետին։ Թագավորը ևս (արդեն դիտենք, որ սա էր առիթ տվել Մանչակի հարձակմանը), քենը սրտում պահած, ստապատի խոսքով մարտի է հրավիրում նրան, ուղարկում ստույգ մահվան։ Կանխազգալով, որ կռիվն իր համար օրհասական է լինելու, այնուամենայնիվ, Հիպարտը թամբում է իր ձին, զինավառվում և հրաժեշտ տալիս համաքաղաքացիներին։ Ողբում անմոռաց է տանեցիներից նրա բաժանվելու պահը, որ պատկերված է մեծ հմտությամբ։

Հուռլեաց, զորդեակրն համրուեաց, հանց որ զնեծելն ի լաց եհան.
Ասաց. «Ուղեա՛կ իմ Յովհաննէս, Վասիլ Լորա՛յր իմ սիրական,
Փառօք տիկի՛ն դու Մանանայ, իշխանունի՛ արեւերման,
Հայեա՛ց պատկերս ի մանկութեան, որ տի մրտնում ի հող տապալն»:

Հրածեղտի պահի այս նկարագրով Թլկուրանցին հայ միջնադարյան պոեզիան հարստացրել է նոր պատկերով, շոշափել է հերոսի հայրական, ամուսնական և եղբայրական սիրո թեման, որ, որքան մեզ հայտնի է, նրանից առաջ երևան էր եկել հաշատուր Կեչառեցու մոտ, Աղեքսանդրի պատմության կաֆաներում և, մանավանդ, նրա արձակ, բայց բանաստեղծական շնչով հորինված բարաոնություններում: Լիպարիտը լոկ հայրենիքին ու եկեղեցուն նվիրված անձ չէ, այլև իր որդու և կնոջ բախտով տառապող մի մարդ, բնտանեսներ և ապրելու տենչով համակված, թեև մեղմորեն արտահայտված այդ գծերը նրա մոտ բնականաբար ստորադասված են հայրենիքը սիրելու մեծ զգացումին: Անկախ այն բանից, թե մարդուն հոգեկան բազմազանությամբ ներկայացնելու գրական հին, բայց և միշտ նոր պահանջն իրացնելը որքանով է հաջողվել բանաստեղծին, այնուամենայնիվ, Լիպարիտին նաև «տանու» մարդ հանդես բերելով՝ նա կարողացել է խուսափել միակողմանիությունից:

Վարպետորեն է ներկայացված ճակատամարտի տեսարանը: Կամուրջը պահպանելու պարտականությունը դնելով թագավորի վրա՝ Լիպարիտը վիպական հերոսի սլացքով նկատում է դեպի թշնամին.

Յիշեաց զՔրիստոս անկաճալն, կրտեց ՚ի անցաւ առիծերման,
Ձենեկն արաւ փախստականն ՚ի հետն երայր բեժանքման:

Թվում է, թե հաղթանակն ապահովված էր, բայց գորավարի չակնկալվող հաջողությունից նեղսրտած՝ թագավորը թշնամուն է գիջում կամուրջը, որով անցնում էր Լիպարիտի տունդարձի ճամփան: Վերջինս, հոգնած ու հաղթական, բաղադ է դառնում, սակայն կամուրջի մոտ դարանակալած թուրքերն անսպասելիորեն շրջապատում են նրան և սպանում:

Ըռումը դրեին ամլն դիհացն, յատ խոզեցին զյաղրող վրկայն.
Հայեր ողորմ յաջ և ի ձախ՝ զոչ ոք դրտաւ իւր օգնական:

Դրվատելով Լիպարիտին՝ Թլկուրանցին դրանով իսկ բարձրացրել է հայրենիքի պաշտպանության գաղափարը, անձնագոհությունն ու մարդկայնությունը, որով տոգորված են և նրա մյուս, քնարական բանաստեղծությունները: Երևում է, որ մարդկանց մեջ ազնվության ու շիտակության վեհ իդեալների որոնման ճանապարհին նա ապրել է տառապանք, իսկ տառապանքը երբեմն փոխվել է վհատումի. «սսիրելի իսկի չկայ»,—նկատել է նա մի քերթվածում: Նրա լուսավոր քնարերգության մեջ իրեն տեղ-տեղ զգացնել տվող հուսահատության այդ նոտան, մեր կարծիքով, առաջացել էր նաև Սսի ավերման կենդանի օրինակից: Թվում է, որ «Քանի՛ դատիս ի հետ մեղաց» սկսվածքով տաղի հետևյալ բնղհանրացումը Կիլիկյան Հայկական պետության անկման փաստից էլ է ծագում:

Ով որ ունէր բերդ ու բաղաք, դարպարքնի ոսկով ծեփած՝
Յետոյ եքող զամլեն անտէր, եւեհն հողուն եւ պսորկած22:

Գիտակցելով, որ կյանքում ամեն ինչ անկայուն է, իրրև մարդասեր Թլկուրանցին մնացել է սիրով ու հավատով, փարվել լավին ու բարությունը՝ Ահա նրա խորհուրդը մարդուն.

Ատելութեան տեղիք մի՛ տար, որ բարութիւն երբայ մընայ23:

Լիպարիտը կրել է բանաստեղծի երազած կատարյալն ու լավը, այն մեծ սերը, որը երկրի անկախության համար նրան մղել է հերոսության ու նահատակության: Ողբում մի կողմից՝ հայրենասեր զորավարի, մյուս կողմից՝ մեծաթիվ թշնամու միջև ծավալվող պայքարից բացի զգացվում է և մի խուլ հպարտություն, թաքնված հակամարտություն Լիպարիտի ու հայ թագավորի միջև: Չնայած վերջինս նրան «մեծ զօրական» է անվանում, բայց ժողովրդի աչքին նսեմացնելու նպատակով՝ նաև ակնարկում է, որ Մանչակի հարձակման պատճառ նա է դարձել («Հեծելրս քե՛զ համար եկան»): Թագավորի մասամբ բացված այդ կշտամբանքին Լիպարիտը պատասխանում է երդումի պես հնչող իր խոսքով, որի մեջ զգացվում է թե՛ հայրենիքին նվիրվածության զաղափար, թե՛ զուսպ արհամարհանք նրանց նկատմամբ, ովքեր ահեղ վտանգի պահին ոչ թե մաքառել, այլ լուկ խոսել գիտեն.

Քաղցեիկ ետուր պատասխանի, ք.՝ «ես»՝ Բաղիս շաբին փոխան,
Բայց չի պատեճ զբուց առնել, քչպիտ ճասաւ ինձ օր մահաւան:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Թլկուրանցին, ի տարբերություն հայ մյուս, նույնիսկ իրենից ուշ հանդես եկած ողբասացների, զրժ-բախտ դեպքը չի մեկնում իրրև աստծու հանդեպ մարդկանց կատարած մեղքի հետևանք, իսկ թշնամուն չի դիտում իրրև սաստ ու միջոց, որով պատժվում են մեղսագործները: Ծիշտ է, ողբում արտահայտված է քրիստոնեության ցայտուն ջատագովություն՝ ընդդեմ մահմեդականության, Լիպարիտն էլ համարվում է հաղթող վկա, բայց կրոնականն ավելի շատ ժամանակի անխուսափելի պահանջի, քան հեղինակի ներքնարուխ ցանկության արգասիք է (վկա նրա սիրային քնարերգությունը, որը բովանդակությամբ աշխարհիկ է և միանգամայն ազատ քրիստոնեական զաղափարախոսությունից): Էականը բանաստեղծի հայրենասիրությունն է, իսկ մահմեդականության հանդեպ նրա բարկացալիտ ատելության ակունքը պետք է տեսնել հայ ժողովրդի անկախությանն սպառնացող այն վտանգի մեջ, որը զալիս էր մահմեդական ցեղերից: Օտարի յուծն անձնապես կրած Թլկուրանցին, որն այն ձաղկելու հարցում անզուսպ է և անողորմ, բռնակալի հանդեպ իր վերաբերմունքը արտահայտում է բացահայտ, իր բացասական զնահատումները մեծ մասամբ երևան հանում մերկապարանոց: Մանչակը համարվում է «շարեաց մառան», նրա զորքը՝ «զազանադեմ անօրինի», որ հաղթանակի է հասնում ոչ թե բաց կովում, այլ խարեությամբ: Տաճիկ (արար) ու թուրք բնորոշվում են՝ «ազգն անհաւան», նմանեցվում օձ ու կարիճի: Նման համեմատություններն ու մակդիրները, սակայն, ընդհանուր տեղիներ են հայ բոլոր ողբասացների երկերում, այնպես որ Թլկուրանցու մոտ զրանք երևան են եկել զրական ավանդույթի ուժով, պատմական թեմայով ողբի ժանրի պարտադրումով:

23 Նույն տեղում, էջ 191:

«Տաղ քաջի Լիպարտին» ողբում բանաստեղծի խոսքը հաճախ էլ աչքի է ընկնում պատկեր-համեմատություններով, որոնք գերծ են վերը բերված օրինակների շորությունից, հուզական են ու տպավորիչ: «Արին հանէր գերթ գետ Զիհան» (մի ուրիշ տեղ՝ «Հանց որ արին գետեր ելան»), — գրում է Թլկուրանցին, և ընթերցողը ջրաշատ ու կենսատու Զահանի հետ միասին մտովի պատկերացնում է և Լիպարտի անօրինակ քաջագործությունները: «Զերթ քաջխոփ տիկ շարեօք լըցան», — ասված է շարությունը համակված եզրատացիների մասին: Բայց ամենահաջողը, թերևս, հետևյալ նմուշն է.

Եւ ի յահէն Քաջ Լիպարտին զինչ զոռ զողան 'ու առաջ չի գան:

Եզրատական սուլթանության սաստկացող հարվածներից 1375 թ. խորտակվեց Կիլիկյան հայկական պետությունը: Ժողովրդի մի մասը ենթարկվեց սրածության, շատերը գերվեցին, տասնյակ հազարավորներ, կոտորածից խուսափելու և խաղաղ կյանքի տենչով, պանդխտեցին այլ երկրներ: Ազատության հույսը, սակայն, չմեռավ. ժամանակի արյունոտ փորձություններին դիմադրավելու ընդունակ հայության մեջ անմեռ մնաց հայրենիքի սերը: Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարտինը» ժողովրդի հոգում ազատագրական կովի այդ զաղափարը բորբոքող մի ողբ է, միաժամանակ անմահացնող հիշատակն այն հերոսի, որը «պատմության մեջ փայլակի մը պես կերևի և կանցնի, բայց... պայծառ և բարեբաստ փայլակի մը պես» (Ալիշան):

«ПЕСНЬ О ХРАБРОМ ЛИПАРИТЕ» ОВАНЕСА ТЫЛКУРАНЦИ

П. М. ХАЧАТРЯН

(Р е з ю м е)

Спарпет Липарит является одним из известных деятелей последнего периода истории Киликийского армянского государства, павшим в борьбе армянского народа за свою независимость против Египетского султаната. Подвиг и трагическая гибель этого легендарного героя воспеты в «Песне о храбром Липарите» выдающегося армянского средневекового поэта Ованеса Тылкуранци. «Песнь» представляет собой плач в стихах и имеет определенную художественную и историческую ценность.

Ряд историко-литературных источников, в частности некоторые новые рукописные материалы, дают возможность выявить историческую среду, лежащую в основе плача Тылкуранци, а также осветить биографию Липарита и его родословную. Анализ данных армянской рукописи XIV в., хранящейся в Британском музее (рукопись № Ог : 5458), приводит к выводу, что Липарит, вероятно, происходил из грузинских Багратидов. Переписчиком рукописи является родной брат Липарита — Василий. Вторая часть статьи посвящена анализу идейных и художественных достоинств «Песни».